ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները համալրելու համար.

1.Կանանց խորհրդատվության բաժնի տեղամասային մանկաբարձ-գինեկոլոգ- 3,0 դրույք
2*. Մանկաբարձ-գինեկոլոգ (ստացիոնար) - 1,0 դրույք
3. Ուլտրաձայնային ախտորոշման բժիշկ - 0,5 դրույք
4. Անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ - 1,0 դրույք

ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակիցը կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորև նշված պայմաններին՝

Բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ

Հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն

Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է

1) դիմում/լրացվում է տեղում/
2) մեկ լուսանկար 3x4 չափի,
3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
4) ինքնակենսագրություն,
5) անձնագրի, բարձրագույն և հետբուհական (ում բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,
6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,
8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերությունում (ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Հատիսի 22, հեռ. 022237262, 022235787) ամեն օր ժամը 10:00-15:30, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 26.03.2020թ.:

Մրցույթը տեղի կունենա «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ում 31.03.2020թ. ժամը 10:00-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի աշխատանքային խմբին կամ զանգահարել 022237262, 022235787 հեռախոսահամարներով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: